ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №11.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

16-ը մարտի 2014թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2014-15թթ. ուս. տարվա II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:*

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

2. *Մանկավարժական պրակտիկայի ամփոփում:*

   /զեկ. Մ. Ս. Աթոյան/

3. *Կուրսային աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:*

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

4. *Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքների քննարկում:*

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Ընդգծելով, որ օրակարգում նախատեսված է 4 հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց ուսումնական պլանի հիման վրա կազմված 2014-15 ուստարվա II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը, որը կազմվել է ԻԿՄ, ԿՄՖ և ՔԿԳ մասնագիտության I, II, III կուրսերի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք համակարծիք էին և առաջարկեցին ներկայացնել հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը:

2. Հանձնարարել ամբիոններին ժամանակին իրականացնել 2014-15թթ. II կիսամյակի I ընթացիկ ստուգումների և քննությունների կազմակերպման գործընթացը:

1. 2014-15 ուստարվա II կիսամյակի I ընթացիկ ստուգումները և քննությունները անցկացնել ըստ հաստատված ժամանակացույցի:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ մանկավարժական պրակտիկայի ղեկավար Մ. Ս. Աթոյանը: Նա ներկայացրեց մանկավարժական պրակտիկայի արդյունքները, ըստ որի ,,Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա,, մասնագիտության III կուրսի թվով 14 ուսանողներից մասնակցել են բոլորը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Ք. Վ. Օթարյանը: Նրանք կարևորեցին պրակտիկայի նշանակությունը ուսանողների մասնագիտական հմտությունների կայացման գործում:

Օրակարգի երրորդ հարցի մասին գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը հանդես եկավ կուրսային աշխատանքների կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա. Վ. Ցուցուլյանը և Ռ. Ռ. Քամալյանը: Նրանք ներկայացրին, որ կուրսային աշխատանքների հետ տարվող գործընթացը իրականացվում են, կան աշխատանքներ, որոնք ավարտվել են կամ ավարտվում են:

Օրակարգի չորրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները. ըստ որի

1. ֆակուլտետի միջին գնահատականը կազմում է- 4,46
2. Ֆակուլտետի դեկանի միջին գնահատական-4,88

3. Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի միջին գնահատական-4,34
4. Ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի-4,55
5. Անտառագիտության ամբիոնի միջին գնահատական- 4,66
6. Դեկանատի գործավարի միջին գնահատական-4,72

Այնուհետև զեկուցողը հանձնարարեց ամբիոնների վարիչներին, արդյունքները քննարկել ամբիոնների նիստերում:

ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ